



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

204

ՆԱԼԱՅ

ՈՒ

ԴԱՄՄԵՍԵՆՏԻ

ՀԱԴԿԱԾԵՆԻ ՀԵՐԻԾԹ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐՔՆԻՑ ՀԱՅ ԵՐԵԽԱՆՑ
ՀԱՄԱՐ

8

31

ԳԵՂՐԳ Ա. ԲԻՄԵԱՆՑ

Յօդուտ այն 3000 հայ ընտանիքների, որոնք
ներկայ պատերազմի պատճառով ստիպուեցան թողնել
իրանց հայրենիքը և գաղթել դէպի Երեանու գաւառը,

ՏՓԽԻԱ

ՊԱՐԱՆԻ ՅՈՎՃԱՆԵԽԻՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՑ

1877

83 Մ.

Գ-18

56 NOV 2011

834. Կ-18 իրքության համար՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԽՈՐՎԱԴՐՈՒՄ

ԿԱՂԱՑ

ՈՒ

ԴԱՄԱԵԱՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻՑ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՄԱՐ

8
37

ԳԵՐՄԱՆ Ա.ՔԻՄԵԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑ

Յօդուտ այն 3000 հայ ընտանիքների, որոնք
ներկայ պատերազմի պատճառով ստիպուեցան թողնել
իրանց հայրենիքը և գաղթել դէպի երևանու գաւառը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Բիблиոթեկա-читальня „Աշկան“
Տ Տ Ֆ Ի Ւ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀՈՆԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

1877

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Августа 1877 г.

1000 3 000 3

Типография Мартиросянца, на Орбелиановской улицѣ № 5

Իմ ուսանողութեան ժամանակ Դորպատում՝
տեսնելով գերմանացի երեխանց ձեռքերում ամէն տե-
սակ պատուական թեթև հետաքրքիր զրքեր ու մի-
արս բերելով հայ երեխանց խեղճ դրութիւնը, էտ
կողմանէ էն ժամանակ զեռ մեր արեւելեան աշխար-
հաբար լեզուով ոչինչ զիր չկար, թարգմանեցի էս
Հնդկաստանի հեքիաթը: Թարգմանութենի ժամանակ
ամեն աշխատանք գործ դրի, որ լեզուն լինի շատ
հեշտ՝ ամենին հասկանալի: Իմ բաղակից էտ միջոցին
ձեռս ընկաւ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստա-
նի» անուանած զրքի ձեռագիրը: Դրա պատուական
լեզուն շատ զրաւեց ինձ և ես աշխատեցի, քանի
կարողացայ, օգուտ քաղել էս թարգմանութենի հա-
մար: Սորա մէջ ես շատ տեղ գործ դրի նորա բա-
ռերը, ձեւերը, նաև նկարագրութիւնները: Բայց սորա
լեզուն կատարելապէս նմանացնել նորա լեզուին, ես
չէի կարող: Նախ՝ որ էտուր համար հարկաւոր էր եր-
կար ժամանակ ուսումնասիրել թէ նորա լեզուն և թէ
Քանաքեռի բարբառը և ետոյ՝ այդ իմ նպատակիս
յարմար չէր, որովհետեւ ինձ ցանկալի էր, որ էս
զիրքը հեշտ հասկանան բոլոր արեւելեան հայերը և

մանաւանդ Թիֆլիզի և Վրաստանի հայերը, որոնք էն ժամանակ շատ թոյլ էին հայագիտութեան մէջ: Էս զրքի տպագրութիւնը զանազան պատճառներով մինչև այժմ մնաց ու մնաց և թէպէտ այժմ մեր արեւելեան բարբառով շատ պատօւական զրքեր կան տրապած, բայց և այնպէս ես կարծում եմ, որ սա էլ մի փոքր օգուտ կարող է բերել մեր տղերանց և նաև մեծերին, որոնք ոչ օտար լեզուներ գիտեն և ոչ էլ հայերենը այնքան, որ կարողանան մեր աւելի բարձր ու մշակուած լեզուով գրուածները կարդալ ու, հասկանալ:

Պարագ եմ համարում այստեղ յայտնել իմ խորին շնորհակալութիւնը մեծապատիւ Պ. Զաքարիա Գրիգորեանին, որն որ ընծայեց այս զրքի տպագրութենի բոլոր ծախսերը և այդպէսով միջոց տուեց ինձ սորտ վաճառելուց գոյացած բոլոր արդինքը նուիրել այժմ Երևանի գաւառում թափառող, ինչպէս նաև և Պամայեանտին, անտուն, անիոն, անհագուստ, սովորու ծարաւից նեղացած 3000 հայ ընտանիքներին: Բայց էս խեղճերը նալայի պէս իրանց կրօնի դէմ չեն մեղանչել: Գրանք էտ թշուառութենի մէջ ընկել են իրանց կրօնին հաւատարիմ մնալու, իրանց կրօնակիցների յաղթութենի համար ուրախանալու և նրանց

բազկատարած, խաչով, խաչվառով և եկեղեցական երգերով ընդունելու համար: Զարմանալի չէ, որ էտ վարժունքը վայրենի քրդերու մոլեուանդութիւնը մինչև վերջին կէտը հասցրեց և նոյս պատերազմի համար հաւաքուած բազմաթիւ խումբերը՝ առաջ էտ խեղճ, անդէն մարդկերանց վերայ փորձեցին իրանց ոյժը: Այժմ պէտք է օգնել էտ խեղճերին, որ չլինի թէ քրդերի թրերից ազատուածները՝ սովոր, ծարաւից, հիւանդութիւններից մեռնեն՝ ոնչանան:

Հայեր, չեմ ասի թէ մենք էլ ինչպէս Պամայեանտին տեսնելով՝ որ նալան իր վերջին վերարկուն էլ կարցրեց, ծածկեց նորան իր միակ վերարկուով, տանք էտ խեղճերին մեր ունեցուածքի կէսը: Այժքանը հարկաւոր էլ չէ, բայց մենք ամենքս պէտք է մեզ սուրբ պարտականութիւն համարենք մեր ունեցածից մի, նաև փոքրիկ, մասը տալ զրանց և պահպանել մինչև պատերազմը վերջանայ և գոքա կարողանան վերագտառնալ ու հանգիստ ապրել իրանց պապական ժառանգութենի մէջ: Ասում եմ վերագառնան, որովհետեւ հաւասարի եմ, որ այս պատերազմի գլխաւոր պատուը կիմնի այժմեան Տաճկաստանի մէջ ընակուող քրիստոնեայ ազգերու անդորրութիւնը և ապահովութիւնը:

մասնաբան և լուսաբան այս օճառության
ու ու չէ համարակ ըստու ովանդի մասքար
ավելի ուշագրաւունք աղջկայ ինձնայ ըստունք
աւ մասնաբան այս և սկզբան պահ մասքար
ու օճառ նախակայ ով մասքար չու ուստ ու ու
պահ պահանուի աղջկայ ըստունք աղջկայ ով
մասքար աղջկայ պահ պահանուի աղջկայ ով
աղջկայ պահ պահանուի աղջկայ ըստունք աղջկայ
աղջկայ պահ պահ աղջկայ պահ պահանուի աղջկայ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ

ու
ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու
ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու
ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու
ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու ու

**Մէ քանի հաղար տարի առաջ Հնդկաստանի
Նիշադայ թագաւորութենի մէջ մէկ երիտասարդ իշ-
խան էր կինում նալան՝ Վերապենի որդին—մի ան-
նման ստեղծուած էր սա. մարդ չէր գտնուի, որ սրա
քաջութիւնը կամ իմաստութիւնը, բարիութիւնը ու
աղնուութիւնը ունենար, սրա մարմնի գեղեցկութենի,
կտրիձութենի ու զօրութենի հետ էլ ոչ ովչէր կա-
րող հաւասարուիլ: Աստուածները սրան ամեն առա-
քինութիւնները ու լաւութիւնները էնպէս առատ էին
տուել, որ սա աւելի աստուածներու էր նման՝ քան
թէ մարդկերանց, սրա անունը ողջ աշխարհիք իմա-
նում էր: Հենց էս ժամանակին սրա թագաւորութե-
նին կպած երկիրներից մէկում՝ Վիդարբայում, մէկ
թագաւորի աղջկէկ կար, Դամանեանտի անուանած, մի
գերբնական երեսյիթ. նրա գեղեցկութիւնը, քաղց-
րութիւնը, համեստութիւնը, սրտի անսեղութիւնը**

ու հոգու բարութիւնը՝ աննման, անհամեմատ էին: Որ տեղ ասես, ում բերնում ասես՝ սրա դովասանքնէր, իշխէս էլ նալայ իշխանինը: Ոչ մէ ժամանակ էսպիսի հրաշալի գեղեցկութիւն, որն որ էս երկուսը ունէին, տեսնուած չէր, ոչ աստուածներու, ոչ էլ մարդկերանց մէջ:

Արանց դովասանքը էսպիս տարածուած լինելով իրանք էլ մէկու դովքը լսել էին և էսպիսով մէկ մէկու ճանաչում էին, չնայելով որ մէկմէկու մարմնաւոր աչքով չէին տեսել: Մէկ օր նալայ իշխանը մէնակ իր հօր պալատի մօտ եղած անտառումը ման էր գալի, մէկ էլ տեսնես, մէկ սպիտակ կարապներու երամ, որոնց թևերը ուկուց պէծպծի էին տալիս, էնալէս նրան մօտ եկաւ, որ նա ձեռը ձգեց ու նրանցից մէկին բռնեց. յանկարծ էս թևեաւորը սկսեց խօսել զարմայած մնացած իշխանի հետ՝ էսպիս:

«Աի սպանիլր ինձ, ով թագաւոր, զրա փախարէն ես էլ քեզ լաւութիւն կանեմ—կերթամ Դամայի եանսոի թագուհու մօտ քեզ էնպիս կգովեմ, որ նա իր օրումն էլ ուրիշ թագաւորի որդու վրայ չմտածէ, բայց միայն քեզ վրայ: Նալա, գիտես թէ ի՞նչէ Դամայեանտին: Դամայեանտին, միս, ի՞նչ ասեմ—աշխարհքի աչքն է Դամայեանտին. երկնքի տակին,

գեանի երեսին անթառամ ծաղիկ է Դամայեանտին. վարդ մանուշակ, անգին, անշատ է Դամայեանտին. ի՞նչ լեզու պէտք է լինի որ նրա գեղեցկութիւնը պատմե, ի՞նչ աչք, որ նրա տեսքը ու կերպարանքը մէկ բանի նմանեցնէ. նրա շարմաղ, լուսաթաթախ երեսը, արեգակի պէս լըս է տալի ու վարդի պէս փայլում: Նրա երկնքի նման աչքերը տեսնողի հոգին վառում կրակում են: Ո՞րն ասեմ նալայ, ո՞րը, նրա նմանը ոչ եղել է էս երկրի վրայ, ոչ էլ կլնի: Դու ես մարդկերանց զարդը, նա աղջկերանց պսակը, բայց ի՞նչ է քու բախաւորութիւնը, երբ գու նրան չունիս՝ երբ նա քեզ չէ սիրում: Էս ու հազար էսպիսի բան ասեց էս ոսկեփետուր կարապը: Նալայի սիրաը կրակ ընկաւ. ձեռները գող ու կմկմալով աղջկայ պէս կարմիկով ասեց. «Դնա ինձ համար էլ էտպիս խօսիր Դամայեանտի առաջը:» Իշխանը թողեց թռչունին. նա էլ իր երամով դէպի Վիդարբայ թագաւորութիւնը ու քաղաքը թռաւ, որ հրեշտակի պէս անմեղ Դամաեանտուն սրառմին էլ սիրոյ բոցը վառ է:

Մէկ օր էլ Դամայէանտին մի ծաղկազարդ պարակնում, մի սիրուն ծառի տակ, մի գչզան առուի մօտ նստած էր. նրա ընկերներն էլ որոնց թիւը հարիւրից էլշատ էր, կողքին շարուել էին—որը կողքին նստել

ձեռը նրա ծտովն էր գցել միւաը մէջքով որը առաջեր չոքել ձեռները կցել ու նրա աննման պատկերին էր նառմ. որն էլ նրա սակեթել մազերու հետ էր խաղում: Թռչուններն էլ որոնք ծառերու վերայ նստած էին, ձեռները կրել ականջները սրել էին՝ որ նրա ձէնը լսն: Արեգակն էլ Դամաեանտու գեղեցկութիւնը տեսած, ամօթից ամպերը երեսին էր հաւաքել որ իր բժերը չտեսնեն, բայց էլի սիրտը չէր համբերում, մէկ մէկ դլուխը ամպերի տակից հանումէր, որ Դամաեանտուն տեսնի: Էսէնց աստուածուհու պէս նստած խօսումէր Դամաեանտին, երբ որ էն ոսկեթել կարապները եկան հասան ու սկսան աղջկերանց գլխներին թռփուտալ. աղջկերքը էս որ տեսան, խկոյն վեր թռան, որ նրանց բռնեն ու նրանց քամակից վազլզելով ցրուեցան պարտիզումը: Դամաեանտին մնացել էր մէնակ, նա էլ դէս ու դէն էր մտիկ տալի, որ մէկ կարապ բռնէ: Յանկարծ մէկ կարապ նրա կողքից անցկացաւ: Դամաեանտին իր նաղուկ ձեռները ձգեց ու բռնեց նրան: Էս էն կարապն էր, որ մի քանի օր առաջ նալայի հետ խօսումէր և նրա սրտումը սիրոյ անհանգելի կրակը վառել էր, որ նրան էրում ու խորվումէր: Հիմի էլ Դամաեանտու հետ սկսեց էսպէս խօսել:

«Սիրուն Դամաեանտի, թող քեզ նալա նիշա-

դայի թագաւորի վերայ պատմեմ, որի ձեռից հորէս թռել քեզ մօտ եմ եկել: Ա՛խ թագուհի, ի՞նչպէս սկսեմ—նրա գեղեցկութիւնը աննման է. նրա չինարի հասակը, նրա թուլս թուլս աչքերը, նրա երկնակամար ունքերը, նրա աննման գեղեցիկ պատկերը, նրա անուշ լրգուն, քաղզը ձէնը, նրա լին թիկունքը, բարձր ճակատը՝ մարդի խելք են տանում: տեմողը շմում, նրան մտիկ տալով չէ կշտանում: Սազը ձեռն առածին պէս՝ քարին, փետին շունչ հոգի է տալիս: Նա որ ծիծաղում է, աչք ունք բաց անում, հենց իմանսա վարդ է բաց լինում, երեսիցը լոյս վեր թափում: Թագուհի, որտեղ մենք գնացել ենք, թէ էս երկրիս վրայ մարդկերանց մէջ, թէ դրախտումը աստուածներու մէջ, թէ հսկաներու բնակարաններումը, ոչ մի տեղ չինք տեսել նրա պէս գեղեցիկ, նրա պէս առաքինի: Չնայելով որ թագաւորի որդի է, նրա մէջ հսպարտութենի նշոյլ էլ չկայ—նա մեծի հետ մեծ է փոքրի հետ փոքր: Ա՛խ, նալան, նալան, երկրիս պարծանքը, աշխարհիս զարդը, մարդկերանց աչքը, թագաւորներու թագաւորը, որբերու հայրը, այրիներու ու աղքատներու պաշտպանը, աստուածներու սիրեկանը, որի անունով ողջ աշխարհ երդվումէ և արևով խնդում: Էս նալան պէտք է քու փետան լինի,

որ գու ամենաբաղտաւոր կին լինես աշխարհի վրայ. գու էն ժամանակ կոնկնասս ինչ որ գեղեցիկ, բարի ու հրաշալի յան կայ երկրիս երեսին. քեզ հիմի, Դամանեանտի, ուրիշ բան չէ պահաս էտ զարդից աւելի: Դամանեանտի, մի՞թէ գու կարող ես համբերել որ Նալան քեզ թօղած ուրիշ թագաւորի աղջիկ առնէ, կամ մի՞թէ կարող ես գու քու հրաշալի ձեռը, քու սուրբ սիրտը ուրիշ մարդու ընծայել գու լաւ գիտես, Դամանեանտի, որ սերից լաւ բան չկայ երկրիս վրայ, բայց եթէ սէրը երկու ձեզ պէս հրեշտակներու մէջ լինի, էն ժամանակ ձեր արքունիքը կիառնայ դրախտ՝ անմահներու բնակարան»: Էսաոնք ասելուց ետոյ, թռաւ կարապը Դամանեանտու ձեռիցը: Սա էլ երկար ժամանակ անշարժ նատած, կարծես մի բանի ականջ լինէր դնում: Վերջապէս ուշքի եկաւ, տեսաւ որ կարապը թռել է ու ասեց. ախ, ինչ կլինէր որ էն սոկեթե կարապը ինձ համար էլ էտպէս խօսէր Նալայի մօտ:

Էս օրուանից սկսած Դամանեանտու ուշք ու միաքը Նալայի կողմն էր—զիշեր ցերեկ նրա վրայ էր մտածում: էլ ոչ քուն ունէր, ոչ հանգստութիւն, նրա համար էլ ոչ ուտել կար, ոչ խմել. տխուր տըրատում՝ մէնակ մէնակ ման էր դալի. չէր իմանում թէ

իր սրախ յանկութիւնը ինչպէս կատարէ: Աիրոյ կրակը՝ որ նրան հալում ու մաշում էր, սկսեց կամաց կամաց նրա թշերու վարդը թառամեցնել, նրա աչքերու սէճը պակսեցնել. նրա ընկերները չեին խմանում, թէ ինչ է պատճառը, որ նա էսպէս յանկարծ սկսեց տիպել ու գեղնել. էտուր համար յայտնեցին նրա էտափիսի վիճակը՝ նրա հօրը՝ Բեմա թագաւորին: Սա որ էս լսեց, շատ ու շատ տիպեց, պատճառոր Դամանեանտուն իր աչքի լսի պէս սիրումէր. կամենալով իր սիրեկան աղջկայ ուրախութիւնը և առողջութիւնը յետ բերել նա մտքումը դրեց նրան մարդու տալ. Էտուր համար ուղարկեց նա գեսպաններ հեռու ու մօտիկ երկիրներ ու ամեն տեղերից թագաւորներ ու իշխաններ իր մօտ հրաւիրեց, որ Դամանեանտին կարողանայ նրանց մէջից իրեն վեսայ ընտրել: Ես համբաւը լսուեցաւ թէ չէ ամեն կողմերից թագաւորները ու իշխանները անթիւ ծառաներով շտապով դէպ'ի Վիդարբայ Ճանապարհ ընկան—որը կառքով որը ձիով, որն էլ փղով, ամենքն էլ զարդարուած զեղեցիկ ցըրերով, թանկագին քարերով, մարդիրներով ու զանազան պատկերով:

Զարմանալի բան չէ որ երկրիս թագաւորները էս համբաւը լսած, էսպէս զլխապատառ դէպ'ի Վի-

դարբայ էին վաղում, պատճառ որ երկնայիններն էլ պակասը չարին: Էս օրերումը մէկ բարեպաշտ մարդ՝ Նարադայ անունով՝ իր երկրաւոր կեանքից երկնայինը փոխուցաւ, ինչոտեղ որ Խնդրան՝ օդերու թագաւորն է իշխում: Խնդրան Նարադային ուրախութենովը ընդունեց ու հարցրեց, թէ ի՞նչ նոր բան կայ երկրի վերայ. Նա էլ պատմեց, որ Դամաեանտին պէտք է իրան փեսայ ընտրի: Սրանք էս խօսակցութենի մէջ էին, որ Խնդրայի ընկերները՝ Ագնին՝ կրակի վերայ իշխողը՝ Վարունան՝ ջրի կառավարողը և Նաման՝ երկրագնդի բռնողը, եկան: Սրանք որ Նարադայի խօսերը լսեցին՝ խկոյն իրանց ձիաներով, կառքերով ու զօրքով դէպ'ի Վիդարաբայ Ճանապարհ ընկան, որ Էնտեղ երկրի իշխաններու հետ Դամաեանտուն երկին (որ Նրանցից մէկին ընտրէ): Աստուածները իրանց Ճանապարհի վրայ պատահեցան Նալայ իշխանին, որ տխուր տրտում դէպ'ի Վիդարբայ էր գնում: Սա հենց լսել էր որ Դամաեանտին պէտք էր կարծ ժամանակուայ մէջ մարդու գնայ. գժի պէս մէնակ դուրս էր ընկել—էլ ոչ Ժառայ էր առել հետը, ոչ թիկնապահ զօրք: Տարեցներու Աստուածները Նրան որ տեսան, հիացած նրա գեղեցկութենի վրայ, իրանց

կառքերը կանգնեցրին ու օդից ներքեւ եկան: Նրանցից մէկը ասեց Նալային:

— Եկանցի իշխան, դու մեզ շատ կպարտաւորես, թէ մեր դեսպանը դառնաս:

— Եւքիս վրայ, պատասխանեց Նալան, թէ իմ ձեռից մէկ բան կգայ, որով ես ձեզ ծառայել կարողանամ, ուրախութենով կանեմ: Բայց խնդրում եմ, լրւսափայլ իշխաններ, ասէք ինձ, թէ դուք ո՞վ էք, կամ ի՞նչ բանի համար էք ուզում իմ ծառայութիւնը: Խնդրան պատասխան տուեց Նրան:

— Իմացիր, երիտասարդ, որ մենք անմահ աստուածներ ենք, գնա Դամաեանտու մօտ ու ասա նրան, որ Խնդրան, Ագնին, Վարունան և Նաման գալիս են Նրա մօտ, թող նա էս աստուածներից մէկին իրան փեսայ ընտրէ փեսատեսութենի ժամանակը: Նալայի գլխին ջուր մաղուեցաւ. Ճնկները թուլացան. աչքերը խաւարուեցան էս խօսքերից. ձեռները կցեց ու գետնի վրայ ընկաւ աստուածներու առաջն՝ ու ասեց աղի արտասունք թափելով:

— Ովանմահ աստուածներ, ի՞նչպէս կարող էք դուք ինձանից էտ պահանջել. ինչ ժամանակ որ ես ինքս գնում եմ յուսով, որ կարելի է նա ինձ

բնարէ: Ո՞վ երկնային իշխաններ, ազատեցէք ինձ
էտ պարտաւորութենից: Աստուածները պատասխան
տուին:

—Դու մեղ խոստացար, պէտք է կառարես:

Ի՞նչ անէր խեղճ նալան, գլուխը որ քարովը
տար, լաւ չէր ուզում, բայց աստուածների հրաման-
քին ընդգէմ կինալ հօ չէր կարող: Աներևոյթ զօրու-
թենով նալան կարճ ժամանակի մէջ հասաւ Վիդա-
րաբայ և ինքն էլ չիմանալով ինչպէս, յանկարծ աչքը
որ բաց չարեց, տեսաւ որ Դամաեանտու առաջեր
կանգնած էր: Նրա աննման պատկերը որ տեսաւ
նալան, շմբուեց, խելքը կորցրեց, էլ չէր իմանում
զրախառումն է, թէ երկրում, իր տեսածը զորդ է թէ
երեսյժմ. ձեռները աչքերին քսեց, որ տեսնի քնած է,
թէ արթուն. տեսաւ որ երազումը չէ, որ իր առաջեր
կանգնած աղջիկը հրաշալի Դամաեանտին է, որին նա
շտեսած սիրում էր, որին նա իր երեւակայութենի
մէջն էլ երբէք էտպէս գեղեցիկ չէր կարծիլ: Բայց
ետոյ որ միան եկաւ, թէ ինչո՞ւ համար է եկել խեղ-
ճի լեզուն փորն ընկաւ—արձանի պէս մնաց կանգ-
նած: Դամաեանտին էլ նրա գեղեցկութենի վըայ հի-
ացած՝ հարցրեց,

—Ո՞վ ես դու, աստուածանման երեսյժ, ի՞նչպէս

մոռար դու իմ հօր աւպարանը, որ ոչ ովքեղ ոչ տե-
սաւ, ոչ էլ լսեց քու գալը. երկնքից վեր եկար, թէ
գետնից դուրս եկար: Նալան էս միջոցին ուշքի ե-
կաւ և ասաց նրան.

—Ասիր, Դամաեանտի, ես նալայ նիշագայի իշ-
խանն եմ, ինձ աստուածները ուզարկեցին էստեղ որ
նրանց գալը քեղ իմաց անեմ և ասեմ, որ դու նրան-
ցից մէկին ընտրես քեղ վեսայ՝ ընտրութենի ժամա-
նակը: Հիմիկ կարգը Դամաեանտուն հասաւ սառելու,
պապանձուելու, արձան կարուելու: Փոքր ժամանակ
էսպէս սառած մնալից ետոյ՝ Դամաեանտին աստուած-
ներուն երկրպագութիւն արեց ու ասաց.

—Իմացիր, նալայ, որ ես ոչ մի ժամանակ աս-
տուածներուն իրանց հարկաւոր պատիւը չեմ պակ-
սեցրել. յօրէս ՚ի դէն էլ միշտ նրանց երկրպագովը
կլնեմ, բայց վեսայ՝ ես քեղ եմ ընտրում, թէ դու
ինձ չես ուզի, ես աւելի լաւ կհամարեմ մեռնել քան
թէ ուրիշ մարդու գնալ: Նալան ասաց նրան.

—Ո՞վ Դամաեանտի, ի՞նչպէս կարող ես դու, ո-
րին անմահներն են ուզում, մի մահկանացու ընտրել
որն որ նրանց կոխած փոշու հետ ել հաւասարուիլ
չէ կարող. կամ միթէ չես իմանում, որ ով աս-
տուածներու կամքին ընդգէմ է կենում՝ նա մահ է

ընտրում: Բայց քեզ համար ծաղկում ու պատրաստ վայ են անթառայի պատկներ, լիր Գամաեանտի, իմ բարեկամաբար տուած խորհրդիս ու ոտի տակ մի գցիր քու բաղտը:

— Ես պաշտում եմ աստուածներիս, բայց իմ մարդը դու կլինես, ասում եմ ես:

— Ես իմ պարտաւորութիւնա ինչպէս դեսպան կատարեցի, ասաց Նալան՝ ընտրութենի օրը ես իմ համար կդամ:

— Ետպէս քաջ երիտասարդ քեզ փուոր դնել ոչ ովչէ կարող. արի թագաւորներու ու աստուածներու հետ և ես ամենի միջից քեզ կընտրեմ քեզ՝ դու մարդկութենի զարդ: Ես խօսքերից յետոյ. Նալան եւ կաւ աստուածներու մօտ ու նրանցը յայտնեց ինչ պատասխան էլ որ ստացել էր:

Ընտրութենի օրը Իիմայ թագաւորի պալատը լքյուեցաւ թագաւորների որդիկերանցով, թագաւորներով ու իշխաններով, որոնց մէջ շատ գեղեցիկ պատկեր կար, շատ վառվուն աչքեր, բայց Գամաեանտու աչքը մէկին էր պառում՝ իր սիրելի, իր աննման Նալային: Բայց ինդք տարեկուսած մնայ, երբ որ մէկի տեղը հինգը տեսաւ նրա նման, պատճառ որ աստուածներն էլ նրա կերպարնէք էին առել որ Գա-

մաեանտուն սխալացնեն. որ կողմը չէր շուռ գալի՞ Նալային էր տեսնում, բայց չէր իմանում՝ թէ իր սիրեկանը որն է: Նատ ժամանակ փուծ տեղը պտուելց յետոյ, ձեռները կցեց ու արտասունքով լիքը աշքերը դէպի երկինքը բարձրացրեց և դողալով ասում էր.

Ո՛վ անմահ աստուածներ, ձեզ յայտնի է, որ ես միշտ թէ սրտով թէ խօսքով թէ զորձքով ձեր պաշտողն եմ և ձեզ եմ ապաւինած. ձեզ յայտնի է որ ես երդում եմ տուել ձեզ և ինձ որ նա պէտք է լինի իմ մարդը և նրանից աւելի ոչ ոք. գուք ողորմանձ էք եղել իմ վերայ, ով երկնային իշխաններ, հիմի էլ ողորմեցէք և ձեր երեսը միք ետ դարձնի իմ խնդրեքից, ցոյց տուէք ինձ նրան՝ որին որ պըտառում եմ:

Ես պարզ ու անմեղ խնդիրքը շարժեց աստուածներու գութը և նրանք իրանց աստուածութենի նշանները ընդունեցին ու Դամաեանտին ճանաչեց նրանց, պատճառ որ կանդնած էին առանց գետնին կպչելու անմահութենի պսակներով զարդարուած, առանց աչքի թերթերուկները շարժելու: Բայց Նալան կիսաթառամ պսակով փոշտուած զգեստով կանդնած էր ինչ պէս ուրիշ մարդկերքը. Դամաեանտին աչքերը գե-

ախն զցած մօտեցաւ նրան ու ինչպէս ծէսն ու սու-
փօրութիւնը պահանջում էր՝ ձեռովլ նրա շորին կպաւ
ու նրա վղին մի հրաշալի պասկ գցեց: Էս տեսնելով
ամենքը ուրախացան և օրհնեցին էտ ընտրութիւնը
և գովում էին նալայ իշխանին: Նալան ըռքեց իր
հարսի առաջելը, որն որ նրան էր ջոկել մահկանա-
ցուների և անմահների մէջից և երդում տուեց, որ
նրան հաւատարիմ կմնայ և կսիրի մինչեւ որ շունը
բերնումը կունենայ: Աստուածներն էլ ուրախացան
էտ տեսնելով և իրանց հաւատարիմ գեսպանին մեծ
ընծաներ տուին: Խնդրան օգերու իշխողը շնորհեց
նրան պարզ տեսնելու կարողութիւն և զովարար օդ,
ինչտեղ էլ որ հարկաւորութիւն ունենայ: Կրասկի աս-
տուածը պարզեց նրան կրակի վրայ իշխելու և նրա
մէջ անմիսաս մնալու զօրութիւն: Երկրի իշխողը տուեց
նրա քայլերուն հաստատութիւն և համեղ կերակուր-
ներ պատրաստելու արհեստը: Զրի աստուածն էլ նրան
ծրի վրայ իշխանութիւն տուեց: Բայց Դամաեանտուն
ասացին նրանք, որ մէկ իր պէս գեղեցիկ ու բարի
տղայ ու աղջեկ կրերի: Սրանից յետոյ ճանա-
պարհ ընկան, ինչպէս էլ եկել էին՝ իրանց ամպէ կառ-
քերի մէջ: Ենպէս էլ երկրի թագաւորները: Նալան
հարսանիքի օրերը ուրախութենով անցկացնելից ե-

տոյ՝ իր սիրելի նշանածի հետ գնաց իր երկիրը, ուր
երջանիկ թագաւորութիւն էր անում:

Աշխարհը պահպանող աստուածները ետ գառ-
նալու ժամանակին պատահեցան Քալիին՝ չար ոգուն:
Խնդրան հարցյաց նրան, թէ ուր է գնում:

— Դամաեանտու փեսատեսութիւն, որ նրան ես ինձ
ընտրեմ, ծիծաղելով պատասխանեց Խնդրան:

— Փեսատեսութիւնն էլ ու հարսանիքն էլ կերան,
պրծան առանց քեզ. Հօրէս էն անզլից ենք գալի.
մեր աչքի առաջելը ընտրեց հրաշալի Դամաեանտին՝
իր պէս գեղեցիկ նալային:

Քալին էս որ լսեց, կտաաղեց, պատճառ որ նա
աստուածներին թողած՝ մահկանացու մարդ է ընտ-
րել: «Պէտք է որ ես սարսափելի կերպով պատժեմ
մինին ու միւսին էլ»: Բայց աստուածները ասացին
նրան, որ իրանք էին առուել էտուր կանքը, պատճառ
որ Նալան նրանցը հաւատարմութենով ծառայել էր
և ամեն դրաի ու ներսի կատարելութիւնները ուներ
և ոչ ով նրանից աւելի արժանի չէր Դամաեանտուն
փեսայ գառնալու: Էստուր համար անկարելի է նրանց
վրայ բարկանալ ու նրանց պատժելը մեղք է: Էս խօս-
քերից ետոյ բարի աստուածները բաժանուեցան չա-
րիցը: Քալին էս օրուանից սկսած գիշեր ցերեկ էն

Էր մտածում, որ մէկ կերպի նալայի սիրտը մտնի, որ նրան փշացնել կարողանայ: Թեվախարայ դեհն էլ հրամայեց որ խաղալու ոսկորներու (զարերու) մէջ մտնի ու իրան իր չար խորհուրդը կատարելումը օգնական լինի: Բայց չարը չէր կարողանում նալային մօտենալ ինչու որ սա աստուածներու պաշտամոնքը միշտ կատարում էր, բարի ու արդարադատ էր—նա իր հպատակներու հայրն էր, չէ թէ թագաւորը:

Վերջապէս եօթը ասրուց ետոյ՝ մէկ գիշեր նալան շատ դադրած լինելով, քնեց առանց աղօթք անելու ու առանց լրւացուելու, որ իր կրօնին ընդդէմ էր ու որովհետեւ նրա մարմինը մաքուր չէր՝ չար ոգին ճանապարհ գտաւ նրա մէջ մտնելու:

Նալան մէկ խորթ եղայրը ունէր Փուշքարայ անունով: Սա մէկ փոքր երկրի տէր էր ու նալայի հետ շատ սիրով ապրում էր: Մէկ գիշեր չար ոգին երազումը սրան երեցաւ ու ասաց՝ որ գնայ իր եղայրը հետ խաղայ ու նրանից նիշագայ թագաւորութիւնը տանի: Էստուր համար մէկ օր Փուշքարան նալային ասաց. «Արի խաղանք», սա էլ սիրով ընդունեց, պատճառ որ չար ոգին նրա վրայ տիրել էր ու ինչ էլ ուզում էր՝ էն էր անել տալի: Խաղը սկըսուեց Դամանեանտու առաջեր և որովհետեւ խաղի

ոսկըներու մէջ Դվախարայ Քալիի ծառան էր նստած, ամեն զար գլորելիս նալայի ոսկին, արծաթը, ապարաններն ու քաղաքներն էլ հետն էին գլորվում: Նալան անդադար տանուլ էր տալի ու էտ պատճառով աւելի տաքանում էր խաղի մէջ: Դամանեանտին տեսաւ որ բանը բանի նման չէ ու թէ էսպէս էլի շարունակուի, նալան պիտի իր ունեցած ըննեցածը ողջ տանել տայ, էտ պատճառով սկսեց խնդրել նալային, որ խաղից ձեռք վերցնի, բայց ի զուր: Նալան, որ քանի նրանք մարդու կնիկ էին, մէկ օր նրա խօսքից չէր գուրս եկել—միշտ աչք ու ականջ սրած ունէր՝ որ խմանայ թէ իր սիրելի Դամանեանտու կամքը ինչ է, ու գլուխը մահու էր տալի, որ նրա կամքը կատարե, հիմիկ ոչ նրա խնդիրքն էր լսում, և ոչ նրա աչքի արտասուքին էր մտիկ անում: Նախարարները ու քաղաքացիքն էլ եկան ընկան նալայի ոտկերքը ասելով:

— Նալայ, մեր իշխան, մեր թագաւոր, մեր աչքի լոյս, խնդրում ենք, ձեռք վեր տուէք էտ չար խաղիցը: Ինչու էք ձեր տունք ձեր ձեռով քանդում, ձեր ազեղ ինկան, ձեր մատղաշ որդիկերանցն էլլու խնայեցէք, թէ մեզ չէք ինայում:

Բայց ում կասես, ամազ էլ տրաքուե՞՝ նալան

34/109
10/08

ոչինչ չէր իմանայ, Էսպէս էր շար ողին նրա վրայ տիրել որ էլ ոչ կին, ոչ որդի, ոչ երկիր, ոչ աշխարհք էր միաը գալի: Էսքան լնդիրք ու սպազատանքը որ չներգործեց Նալայի վրայ, Դամաեանաին շատ վախցաւ ու աւելի վաս բաներ գուշակելով վճռեց, մինչև որ դեռ ժամանակը ներում էր, իր որդոցը մի ապահով տեղ ուղարկել: Նա հրամայեց Նալայի հաւատարիմ Վարչնէա անուանուած կառավարին, որ Նալայի թագաւորական կառքումը ամենից լաւ ձիաներ լծի ու երեխանցը տանի իր հօր մօտ: Վարչնէան կատարեց, ինչ որ իրան հրամայած էր ու երեխերքը, կառքը ու ձիաները Բիմա թագաւորին յանձնելից ետոյ, էրուած սրտով բարովեց նրանցը ու գնաց Ռուախիերն Այօդայի թագաւորի մօտ կառափար դառաւ:

Նալայի ունեցած չունեցածը Փուշքարան տարաւ, մի քանի ամիս անդադար հետք խաղալով:

Վերջապէս Փուշքարան հարցրեց Նալային ծիծաղերով.

— Կամենում ես խաղը էլի շարունակել, Նալայ եղբայր: Դու էլ հօ ոչինչ չունի՞ Դամաեանտուց աւելի, արի ուրեմն դլրենք զարը նրա վրայ:

Նալան էս խօսքերը որ լսեց, հենց իմացաւ՝ թէ

Երկինքը վրան փուլ եկաւ՝ ուզում էր որ գետինը սպասուուի իրեն ներս տանի կամ դժոխքը բացուի ու կուլ տայ, որ իրան էլ մարդ չտեսնէ, որ նա էլ Դամաեանտու երեխին չմտիկ անէ. Հիմա բացուեցան նրա կուրացած աչքերը ու խլացած ականջները. Հիմա՝ միտն եկաւ իր սիրեկան Դամաեանտու լնդիրքը, իր խելօք նախարարներու, իր հաւատարիմ հպատակներու աղաջանքը ու սպազատանքը, բայց բանը բանից անց էր կացել շատ լաց էլ լինէր ու զլիխն վայ տար, էլ չէր օգնի: Էտուք համար առանց մի խօսք ասելու վրայից հանեց իր թագաւորական զարդերը, ունեցած ոսկին ու մարդարիտը ու մի հասարակ զգեստով դուրս եկաւ իր թագաւորական սպալատից: Դամաեանտին էլ մի միակ զգեստով դուրս եկաւ նրա հետ:

Փուշքարան մահուան զատիք դրեց նրա վրայ՝ ով որ սրանցը իր առն ընդունէ, սրանք էսպէս տանից տեղից զրկուած երեք օր և երեք զիշեր երկնքի տակը անցկացնելից ու սլառուներով կերակրուելից ետոյ՝ մէկ փոքր թփի վրայ երկու թռչոն տեսան: Նալան շատ ու շատ ուրախացաւ սրանց տեսնելով ու իր մոքումը ասեց. «Արանք լաւ խորովածացու ենու ես ասելը, իր զգեստը վրայից հանելը ու ցանցի պէս թռչուններու վրայ զցելը մէկ եղաւ, բայց ափառ, որ

սրանք էն թռչուններից չէին, որ նալային համով խորոված ուտեցնէին: Դորդ է, զգեստը նրանց վրայ մնաց, բայց նրանք էլե վեր թռան ու զգեստն էլ հեար տարան ու նալային վերելից ձէն տուին:

— Այ անխելք, մենք էն զարերն ենք, որ քո հարստութիւնը Փուշքարային տուինք, եկանք որ քու վերջին զգեստն էլ տանենք, որ քու թագաւորութենից ամենելին տկլոր դուրս գնաս:

Նալան տարակուսած մնացելէր կանգնած. աեսնում էր ինչպէս իր զգեստը օդումը փուփում էր, բայց ոչ թռչուններուն կանգնացնել կարող էր, ոչ իր շորին համելը նրանք որ նրա աչքիցը կորան, մի խորը ախ քաշեց, կարծես մի լաւ բարեկամին վերջին օբարև գնասա» էր ասում ու աչքերը արինավ լիքը դէպի Դամաեսնտին շուռ եկաւ:

— Տես, աչքիս լցոս, ասաց նրան, ահա էստեզ Ճանապարհը երկու է բաժանվում: Էս Ճանապարհը տանում է զէպի էն սուրբ տեղերը՝ ուր որ Ճճնաւորներն են բնակվում, բայց էս միւսը Վիդարաբայ է գնում, ուր որ դու մէկ ժամանակ ուրախ և բախտաւոր ապլում էիր, ուր որ քո ազնիւ հայրն է իշխում և քեզ սիրող մայրը քեզ համար հոգսեր կլնի անում: Եստեզ բաժանվում են Ճանապարհները—մինք

տանում է ուր հանդստութիւն և վայելչութիւն է տիրում, միւսը՝ ուր միայն ցաւ և քաղց: Լաւ մտածիր, սկրուն իմ Դամաեանտի և մէկն ու մէկը ընտրիր քեզ համար: Դամաեանտին երկար ժամանակ չէր կարողացել լացը բռնել: Վերջապէս ասաց:

— Սիրելի նալայ, սկրուն կրակ է ընկնում, երբ որ մոածում եմ, որ ես քեզ էտպէս տարաբախտութենի մէջ մէնակ պիտի թողնեմ: բայց ինչպէս թողնեմ քեզ էն ժամանակ, երբ դու քո թագաւորութենից, փողից զրկուել անտուն, անփող, անհագուստ մնացել ես և սովից ու ծարաւից նեղացած ես: Զէ, իմ աննման նալայ, կը բաժանեմ ես քեզ հետ քո ցաւը, քաղցը ու տիրութիւնը: ընկեր կ'դանամ ես քեզ ամեն բանի մէջ և քո միսիթարողը կ'լինիմ, և ինչպէս էլ դու առաջ քու բաղտաւորութիւնը ու վայելչութիւնը ինձ հետ բաժանում էիր, էնպէս էլ թող ինձ, որ քեզ հետ բաժանեմ ամեն բան՝ ինչ որ ունիր—իմ միակ զգեստն էլ կարող է մեզ երկուսիա ծածկել: Սիրելի՝, դու ինձ ցոյց առիր էն Ճանապարհը, որն որ իմ հօր թագաւորութիւն է տանում: արի ուրեմն միասին գնանք էտ Ճանապարհը, իմ հայրը քեզ կօգնի ձեռից եկածին չափ և դու բախ-

տաւոր կլինես նրա օձօրքի տակը: Բայց Նալան աւսաց նրան:

— Մէկ անգամ ես քո հօր երկիրը եկայ հարուստ,
կարող եմ միթէ հիմիկ էնտեղ երեալ ինչպէս մի ու-
զորմելի մուրացկան: Զէ, հազար փառքով լսու է մէ-
նակ անտառներու մէջ մանգալ ու լուսնից ու արեից
աւելի ոշովեց չը տեսնուիլ. քանի թէ թագաւորական
պալատում կենալ թանկադին կերակուրներ վայելլ
ու ամօթից հալուիլ ու մաշուիլ:

Դամաեանտին էս որ լսեց, առանց մի խօսք ա-
սելու, աչքերը արտասունքով լցուած՝ փաթաթեց իր
մարդուն զգեստով ու էսպէս երկուսը մի զգեստով ծած-
կուած՝ յոդնած, թուլացած, քաղցած ու ծարաւ զնա-
ցին իրենք էլ չնմանալով թէ ուր, մինչև որ անտառումը
մի փոքրիկ խրճիթ տեսան: Էս տեղ զլուիները մի
քարի դրին ու խոնաւ չոր գետնի վրայ պառկեցան,
քնեցին, որ մի քիչ հանգստանան, բայց Նալայի
ախուր սիրաը երկար ժամանակ հանդիսաւ չմնաց: Նա,
ողջ էնդուր վրայ էր մտածում, թէ իր աղեղ Դամա-
եանտին ինչպէս պէտք է տանէր էն դժուարութիւն-
ները ու պակասութիւնները, որ նրանք պէտք է քա-
շէն: Էս էլ էր մտածում, որ եթէ նա մէնակ լինէր
կարող էր վերջապէս իր հօր սունը հասնել, պատ-

ճառ որ նրա պէս անմեղին ում ձեռը կ'զօրէր զիպ-
չել ում աչքը նրան ծուռը մտիկ կանէր: Վայրենի
զազաններից էլ աստուածները կպահպանէին նրան,
ուրեմն լսու կլինէր նրան մէնակ թողնել քան թէ
նրան էլ իր հետ տարաբաղտացնել: Էսպէս էր մտա-
ծում նալան, որովհետեւ նրա սիրութեալ էլի Քալին
կուբացրած էր: Բայց երբ որ միտն եկաւ, թէ Դամա-
եանտին զգեստ ունի ու ինքը չունի վճռեց կէսը
կտրել մի սուր թրով, որն որ նա խրճիթի մօտ գտաւ:
Էս բանը անելից յետոյ, ընկաւ գժի պէս անտառը ու
հեռացաւ իր սիրեկան Դամաեանտուց: Փանի Դա-
մաեանտին միտն էր գալի ու իր խոստմանքը՝ որ նրան
տուել էր փեսատեսութենի օրը, ուղումէր յետ գառ-
նալ, բայց չար ողին նրան առաջ էր քշում ու իր
քնած սիրեկանից հեռացնում էր:

Դամաեանտին որ զարթեց և տեսաւ որ մէնակ
է, լեղին պատռուեցաւ: Ովկ կարող է նկարագրել նրա
վախը, նրա աշ ու դողը: Դեռ սկզբումը կարծում էր
որ Նալան նրան վախացնելու համար թախ էր կա-
ցել ու սկսեց նրան կանչել, որ գուրս գայ և նրան
երկար չ'չարչարէ:

— Ա՞ն, իմ սիրելի, ասաւմ էր, իմ թագաւոր,
իմ աչքի լցոյս, իմ ուլախութիւն, ուր ես թախկացել.

դուրս եկ, ահա տեսնում եմ քեզը դուրս եկ, դուրս.
ախ, իմ հրեշտակ, արի. ես վախում եմ էս մուժը
անտառում առանց քեզը արի, իմ աչքի լոյս, ես
մեռնում եմ վախից. ախ, մի՞թէ դու ինձ էլ չես
սիրում. մի՞թէ դու քո խոստմոնքը մոռանում ես:
Ես խօսքերից յետոյ Ճուտը կորցրած հաւի պէս՝ էս
կողմ՝ էն կողմը ճնկաւ գողալով՝ մէկ էս թուփը քւըրեց,
մէկ էն ծառի ետև մոխի արաւ: Վերջապէս երբ տե-
սաւ որ նալան զորդ գնացել ու նրան թողել էր, էլ
իր անմիթար վիճակի վրայ չէր լաց լինում ու գան-
գատում, բայց միայն էն անցայտ թշնամու վրայ, որն
իր հրեշտակի նման նալային ամենելին փշայնել էր
աշխատում, պատճառ որ նա ամենելին կարծել չէր
կարող որ իր հաւատարիմ, բարեկաշտ, իրան էսպէս
սիրող ու պաշտող նալան՝ իր կամքով նրան թողած
լինի: Խեղճին՝ էլ իր ողորմելի վիճակը չէր միտք գալի,
ուշք ու միտքը նալայի կողմն էր: Նա էն էր մտա-
ծում՝ թէ նալան մէնակ, քաղցած, ծարաւ, միայն
կիսով չափ ծածկած, առանց մի միխթարողի ինչ
պիտի անէր: Նա չէր բարկանում նրա վրայ, որ նա
իր զգեստն էլ կէս է արել որ իր խոստմոնքը կոտ-
րել էր, բայց նրա լացը ու կոկիծը էնդուր համար
էր, թէ խեղճ նալան ինչպէս պիտի չարչարվում լի-

նի, որ էսպէս իր կամքի, իր ազնիւ բնովթենի դէմ
բաներ է անում:

Դամաեանտին էս մնակերով չարչարուած՝ ան-
տառի մէջ մէկ դէս էր գնում՝ մէկ դէս. անտառն էլ
քանի գնում էր խոսմում ու մթնանում էր: Էս ան-
տառը լիքն էր պատուական թռչուններով ու ամեն
տեսակ վայրենի գաղաններով, բայց նա անահ, ան-
վախ առաջ էր գնում: Ոչ թռչուններու գեղեցիկ եր-
գելն էր լսում, ոչ գաղաններու սարսափելի ձայններ՝
իր ցաւը ու կոկիծը մնուացած՝ ախ ու վախ քաշելով
իր մարդու նեղութիւնների վրայ էր մտածում: Խեղ-
ճը քաղցած ու ծարաւ, առանց մի տեղ կանգնելու
ողջ առաջ էր գնում, մինչև վերջապէս մի բարձր
սար նրա ճանապարհը կապեց: Դամաեանտին էս սարի
հետ սկսեց էսպէս խօսել.

— Պո՛ւ, որ գլուխդ մինչև ամպերը բարձրացրել ես
ու ծառերով, ծաղկիններով զարդարուել, մէջ հա-
զար տեսակ թանկագին մէտաղներով ու քարերով
լցրել. դու, որից զչչան ջրեր են ներքեւ վաղում:
դու, որ հազարաւոր կենդանիներու պաշտպան ու
բնակարան ես, որի մէջ թզուկներ, վեթխարիններ ու
վեշապներ են բնակվում: դու անցաղթելի, անհասա-
նելի թագաւոր սարերի, կարող ես արդեօք ինձ ա-

սել թէ ուր է իմ մարդը: Ես՝ Բիմայ թագաւորի աղջիկս, քեզնից խնդրում եմ, որ ինձ մի նշան ցոյց տաս, որով ես նրան գտնել կարողանամ: Բայց սարը ոչինչ նշան չտուեց ու անմիշիթար Դամաեանտին իր ձանապարհը չարունակեց: Ութ օր էլե էսպէս դնալից յետոյ, հասաւ մէկ պատուական տեղ, որն օր գեղեցիկ կաղնիներով, արմաւենիներով ու դափնիներով լիքն էր. որտեղ գեղեցիկ ու անուշահոտ ծաղկիներից գոյն զգոյն թիթեռները ու ոսկեգոյն ժժակները ծծում էին քաղցրահամ ցօղը, որտեղ պատուական պտուղներով լիքը ոստերու վրայ գոյն զգոյն թութակներ ու քաղցրաձայն երգով թռչուններ էին ճոճվում. վայրենի գազ գէլները ու անտիլոպները գչզշան առուներու մօտ ման էին գալի: Արանց մէջ տեսաւ Դամաեանտին բարեպաշտ ճզնաւորներ, որոնք էս զրախտի բնակիներն էին: Դամաեանտին էստոնք որ տեսաւ, մի քիչ ուրախայաւ ճզնաւորներոն: Նրանք էլ խոնարհ գլուխ տալից ետոյ, ասացին նրան, որ նստի, փոքր հանգստանայ ու զովանայ: Դամաեանտին փոքր հանգստանալից ետոյ, ասեց.

— Պուք, կարծեմ, աշխարհքի ամեն վայելու թիւններից ձեռք էք վերցրել և ձեր անձը Աստուածու ծառայութենին էք տուել և էտ էլ ձեզ փրկու-

թիւն է տալի ու բաղտաւոր անուն և ինչպէս որ տեսնում եմ, ձեր շուրջ կեցողներին էլ խաղաղութիւն: Ճգնաւորներից մինը պատասխան տուեց.

— Հա, էտուիս է, էտուել ամենքը երջանիկ են և գու էլ էտուել կարող ես վայելել էտ երջանկութիւնը: Բայց ով ես գու, պատուական աղջիկ. գու անտառներու Աստուածուհին հօ չես կամ նրան ջրող աղջիւրներու ոգին, ասա՞ մեզ, որ մենք գտլուսադ տօնենք: Դամաեանտին ասեց.

— Ես ոչ անտառի, ոչ ջրերու եռչ էլ սարերու Աստուածուհի եմ: Բայց մի ողորմելի մահկանացու, և աղի արտասունք թափելով՝ յետ տասւ իր զլիին եկածը և ինդրից նրանցը, որ ասեն, տեսել են արդեօք իր մարդուն՝ թէ չէ: Անոանց նրան իմ կեանքս էլ կեանք չէ», ասում էր ողորմելին: Բարեպաշտ Բրամանները ասացին նրան:

— Գեղեցիկ Դամաեանտի, մեզ առուած է ապագան գուշակելու զօրութիւն, ինչ որ ուրիշ մահկանացուն չունի: Իմացիր, որ քո ապագան էնպէս պայծառ ու պարզէ, ինչպէս քո երեսը, զու նալային էլի կրտենես՝ եթէ գու կհամբերես, ու նրան հաւասարին կմնաս. նա էլի իր երկրի տէր ու թագաւոր կդառնայ: Էս խօսքերից ետոյ յանկարծ թռան Դամաեանա-

տու աչքիցը ճգնաւորները, թռչունները, էն գեղեցիկ ծաղկիներն ու ծառերը, էնպէս որ Գամաեանտին կարծում էր, որ մի գեղեցիկ երազ էր էն իր տեսածը: Խեղճը միտք անելով, ախ ու վախ քաշելով էլի իր ճանապարհը շարունակեց: Ի՞նչ ծառ, ի՞նչ թռչի, ի՞նչ աղբիւր ու ջուր տեսնում էր, ամենին հարցնում էր լալով ու աղաչելով, որ ասեն, նալային հօշն տեսել կամ որ կուլմը պիտի գնայ, որ նրան գտնի:

Էնպէս տիսուր ու տրտում էլի շատ սար ու ձոր անցկացաւ Գամաեանտին: Անտառն էլ քանի գնում էր, նոսրանում էր: Յանկարծ հետուից երենցաւ մի կարաւան, որն որ փղերով ուղաքերով ու ձիաներով ապրանք էր տանում: Գամաեանտին շուտով հասաւ էտ կարաւանին: Սրա գեղեցիկ ու գեղնած երեսը ու կտրտած զգեստը երբ որ տեսան կարաւանի մարդիկը, շատ զարմացան ու վախեցան: Նատը կարծում էր՝ թէ անտառի Աստուածուհի է: Գամաեանախն կարաւանի զլիսաւորին գտաւ ու հարցրեց նրան, թէ Նալային հօշտեսել: Այ պատասխան տուեց՝ որ էն անտառումը նրանից տերիլ ուրիշ մարդ տեսած չէ, բայց առիւծներ, վագրեր ու ուրիշ պատառող կենդանիներ շատ: Ետպ Գամաեանտին հարցրեց՝ թէ ուր է գնում կարաւանը, և երբ որ լսեց թէ Զլեզի քաղաքն է գնում,

ուր որ Սուվան՝ Ճմարտութիւն պտուղ թաղաւորն է իշխում ու որի մայրը շատ պատուական կին է. ինքն էլ մտքումը գրեց էտ կարաւանի հետ գնալ: Կարաւանը մինչեւ երեկոյ անդադար առաջ զնաց: Երեկոյին մի սիրուն լճակի մօտ, որի ափերը գեղեցիկ ու անուշահոտ ծաղկիներով զարդարուած էր, ուր բաւական խոտ ու փայտ կար. Հրամայեց զլիսաւորը՝ որ բեռները վեր բերեն ու էն գիշերը էնտեղ անցկացնեն: Երկար ճանապարհից յոգնած կենդանիներ՝ փոքր ինչ ուտելուց ետոյ, վեր թափեցան որ հանգստանան: Կէս գիշերին, երբ որ ամենքը խորը քուն էին մտել, սարերից վայրենի փղերը ներքեւ եկան իրանց ծարաւը կոտրելու համար և երբ իրանց ընտելցած եղբայրներուն տեսան՝ կատաղած ընկան նրանց վրայ ամենայն բան ջարդ ու փշուր անելով, ինչ որ նրանց գէմէր գալիք թէ մարդ, թէ կենդանի: Էս մի սարսափելի խառնակութիւն պատճառեց: Ամենքն էլ հենց էնդուր վրայ էին մոտածում, որ իրանց զլուխը մի կերպի պրծայննեն: Հայրը որդուն, որդին մօրը, մարդը կնկան մոռացել՝ իրանց վրայ էին հոգս անում: Նառը ծառերի վրայ էին վերև գնում, շատը ձորերն էին թափում կամ ջրում խեղդվում կամ թէ չէ փղերի ոտի տակը մնում և տրորվում: Մի ժամի մէջ էն աւ

Հազին կարաւանը ոչնչացաւ: Դամաեանտին էս վտանգից աստուածների զօրութենով ազատուած՝ երբ որ զարթեց և աչքը էս սարսափելի տեսարանի վրայ դժեց՝ զարհուրեց, բայց նրա ցաւը աւելի ու աւելի սասակացաւ հետեւեալ խօսքերը լսելուց, որ մի քանի ազատուած վաճառականներ ասում էին.

— Ո՞նչո՞ւ համար են հարստութենի աստուածները մեղ էսպէս պատժում: միթէ անաստուած մարդիկ բաւական ծառայութիւն չեն արել նրանց կամ միթէ մի լվրը ու անպատճան մարդկերանց ժողով՝ վաճառականութենի աստուածներուն թշնամացրել է մէկ մէկու դէմ: Բայց ուրիշները ասում էին՝ որ էս ամեն բանի մեղաւորը էն կինն է, որն երեկ նոցա մօա եկաւ—նա պէտք է վեթիսարներու կին լինի անպատճառ. նա մեղ կախարդած պէտք է լինի. քարկոծ անենք նրան, եթէ տեսնենք:

Դամաեանտին էս որ լսեց, վախից ու ամօթից տանջուած՝ հեռացաւ նրանցից ու լայտվ ասեց.

— Ո՞վ չար բաղա, ինչո՞վ արժանացայ ես էս պատժին. իմ երեխութենից սկսած՝ ես ոչ մի չարութիւն՝ ոչ արել եմ, ոչ ասել եւ ոչ մտածել: Ինչ է արդեօք իմ մեղքը, որ ումել ես մօտենում եմ՝ նրանց ել ես պատժում: Ո՞վ անմահ աստուածներ, միթէ

ձեզանից ոչ ովլէ ուզում ազատել ինձ, որ մարդուց բաժանուած, երեխերքից գծած, թագաւորութենից քշած, ազգականներից հեռացած, անպաշտպան ու անօդնական վայրենի օձերով ու կատաղի գալանելով լիքը անսառառմ թափառում եմ: Բայց ետոյ աւեց. Անմէն բան աստուածներու կամքով է լինում, օրհնուին աստուածները: Նրանք ինձ հազարաւոր մարդիկների մէջից ազատեցին. Նրանք ինձ էն կատաղի գալաններիցը անմիաս պլծացրին: Վորդ, ես աստուածներու բարկութիւնը շարժած պիտի լինիմ էսպուրով որ ես նրանցը թողած՝ նալային ընտրեցի և էս մեղքս էս կեանգումը պիտի ազաշխարհման:

Էսպէս Դամաեանտին իրան միսիթարելով՝ միւս օրը երբ որ կարաւանի մնացած մասը Ճանազարհ ընկաւ, հեռուանց նրանց հետեւելով՝ յոգնած հասաւ Զլեղի քաղաքը: Նա որ էնտեղ նիշարած, փոշուուած, իր պաստաած շորերով փողոցներում անց էր կենում՝ նրա վրայ ժողովուրդը զարմանալով մտիկ էր տալի ու նրան խելազար էր կարծում՝ երեխերքը քամակիցը վազգում ու վրէն ծիծազում էին: Էս կերպի հասաւ մինչեւ թագաւորական ապարանը: Թագաւորի մայրը էս ժամանակ ապարանի կորի վրայ կանդնած էր ու երբ որ Դամաեանտուն էս վիճակի

մէջ տեսաւ՝ իր մօտ կանչել տուեց, ինչու որ նորա տեսքը թագուհու սրափ վըայ մի զօրաւոր ազգեցութիւն արաւ: Թագուհին հարցրեց.

— Ո՞վ ես, աղջեկ դու, որ էտպէս լուսնի պէս փայլում ես. զօրդ է դու առանց զարդարանքի ես, բայց փայլում ես Աստուածային լուսով:

Դամաեանտին համեստ պատասխան տուեց.

— Իմացիր, ազնիւ թագուհի, որ ես մի աղքատ մահկանացու եմ, մի բանուոր ու ցանկանումեմ ծառայութիւն գտնել: Ետոյ Դամաեանտին պատմեց իր զլիին եկածը, բայց իր ազդը և անունը թաքցրեց: Թագուհին նրա պատմածը կարեկցութենով լսեց ու ասաց նրան.

— Իու բարի ու անմեղ կին, մնա ինձ մօտ, ես իմ ծառաներիս կուլարկեմ քու մարդուն պառելու. ով գիտէ, կարելի է որ նրա թափառական ուն էլ էստեղ բերէ նրան:

— Ազնիւ թագուհի, քեզ ծառայել ինձ համար մեծ ուրախութիւն է, բայց ինպառում եմ, որ ինձ ցած ծառայութիւններից ազատես և տղամարդկերանցից հեռու պահես, բացի ուսեալ բրամաններից: Թագուհին ուրախութենով ընդունեց Դամաեանտու խնդիրքը ու իր Սունանդա աղջկան կանչեց ու Դամաեանտուն

նրան յանձնեց ասելով, որ նրա խրատները լսի ու նրան սիրով ու պատուով պահի: Սունանդան ուրախացած՝ տարաւ հայրենիքից զըկուած աղջկան իր ընկերներու մօտ: Էստեղ կենում էր Դամաեանտին աշխարհքի վայելութիւններից հեռու, մտածելով իր մարդու ու իր պարտաւորութիւններու վըայ:

Նալան՝ Դամաեանտուց փախչելից ետոյ, էլ ոչ մի տեղ հանգստութիւն չըր գտնում, էնպէս էր երեւում, որ իրանից էլ փախչել էր ուզում: Արեգակի ճառագայթները նրան որ էրում էին, ասում էր արեգակին, Ձենգուր ես դու իմ վըայ էտպէս խիստ աշքով նայում՝ որ ես իմ կնկանս դէմ մեղանչել եմ: Աչքը որ Դամաեանտու շորի կտորի վըայ էր զցում՝ սիրուը հազար փուշ ու դանակ էր խրվում: Մէկ անգամ էլ որ աղքիւրի վըայ կուացաւ ջուր խմելու համար ու նորա մէջ իր պատկերը տեսաւ՝ ասաց. «Ա՞խ, երանի կլինէր՝ որ ես էս իմ պատկերիցս ազատուէի, որ ինձ ոչ ես, ոչ էլ ուրիշը ճանաչել կարողանար:» Էստպէս խօսելով՝ ցաւից մաշուած ու անջուած, հեռացաւ էն աղքիւրից մինչեւ որ նա անտառի մէջ մի տեղ հասաւ, որը կրակ էր ընկել՝ ծառ, խոտ, թուփ մի զարհուրելի կրակի բոցով բռնուել էին: Ես բոցի միջեց էլ մի ձայն էր դուրս գալի.

— Շտապի՞ր, եկ էստեղ նալայ, շտապի՞ր, շտապի՞ր
և ինձ ազատիր:

— Ո՞վ ես գու, ի՞նչ տեղից ես ինձ կանչում և
ի՞նչ է քո ցանկացածը, զարմանալով հարցրեց նա-
լոն: Զայնը պատասխանեց.

— Ես կանչում եմ կրակի միջից, թէ քաջ տղա-
մարդ ես՝ անցկացիր էս կրակի մէջ և արի ինձ մօտ:
Նալան ասաց.

— Ին օրուանից՝ երբ որ իմ կնկաս թողի, ել ոչինչ
բանից չեմ վախենում՝ ինձնից աւելի: Աւ համարձակ
վաճառքը արհամարհելով, մասաւ նա էն հրեղէն ալիք-
ների մէջ, որոնք ամէն կողմից երկրի Ճեղքերից դուրս
էին դալի և նրա զլեսի վրայ մէկ մէկու հետ խառնը-
վում: Նրա ոտի տակը ծլում էին կրակէ մատաղ ե-
ղեգներ և կրակէ ոստերը տարածում էին իրենց
կռները էս հսկային գրկելու համար: Բայց նա կրա-
կից անվնաս մնալու՝ աստուածներից տուած զօրու-
թենով, հասաւ մինչեւ բոցի մէջ տեղը, ուր որ մի
մեծ օձ տեսաւ փաթաթուած ու մի քարի վրայ
պառկած, որի բերնից լեզուի տեղ բոց էր դուրս
դալի: Սա բարձրացարուց իր թագով զարդարած զլու-
խը ու սկսեց էսպէս խօսիլ.

— Ես օձերու թագաւոր Քարքոտաքան եմ. էս

աեղն ընկայ նարադայ ճկնաւորի անէծքով, որին որ
ես խարեցի: Նարադայ մեծ ճկնաւորը առաց. «Մնա
էստեղ անշարժ կրակի մէջ, մինչեւ որ նալան
դայ քեզ ազատելու: Նալայ, կանգնիր անշարժ էս
կրակի մէջ, որ ես քեզ մէկ մէկ պատմեմ՝ թէ ինչ-
պէս ընկայ էս վիճակի մէջ. էսպէսով քու վրդոված
պիտը կհանգստանայ և Քալին, որ քո մէջ բնակ-
վում է, կտանջուի և գու մէկ օր մաքուր ու պարզ
կմիաւորվես նորա հետ, որին կակծիր մէջ կակծով
թողիրա: Անշարժ կանգնած էր նալան ու լսում էր
Քարքոտաքայ թագաւորի պատմութիւնը: «Նարադայ
ճկնաւորը, շարունակեց Քարքոտաքան, ոիր սիրուն
պարտիզում՝ որն որ ինքն էր տնկել միայն էն կեն-
դանիներուն էր թոյլ տուել մննել ու էնտեղ կենալ
որոնք անվնաս են, բայց նրանց՝ որոնք ուրիշ կեն-
դանիներուն մնաս են տալի՝ արգելել էր էն պար-
աիզին մօտենալ. էս պատճառով իմ հսկատակներից
միայն էն անմեղներուն էր հրաման տուել էն տեղ
կենալ, որոնք գեանի վրայ սողալով, ծաղիկների վրայ
եղած ցողն են լկում ու պտուղներով կերակրվում:;
Մէկ օր էս օձերից մէկը մի ծառի վրայ մի թռչունի
բուն և տեսնում և զլուխը առաջ է քաշում, որ
տեսնի՝ թէ մէջը ինչ կայ: Բնի մէջ մի փոքրիկ կու-

պուտ ձու է տեսնում և ցողի կաթիլ կարծելով՝
սկսում է լիւ և կոտրում է ձուն: Ես միջոցին վրայ է
համում թռչունը և իր ձուն կոտրած տեսնելով՝ մի
էնպիսի ձէն է բարձրացնում, որ ճգնաւորը խոյն
գալիս է տեսնելով՝ թէ ինչ է պատահել: Եթէ իմ
փոքրիկ օձը շուտով չփախչէր և ինձ մօտ չդար՝ վայն
հասել էր նրա օրին: Բարեպաշա ճգնաւորը պահան-
ջեց ինձանից էն օձը, որ նրան իր պարտիզում կախ
անի, ուրիշներուն խրատելու ու զգուշացնելու համար:
Ես վճիռը ինձ շատ տրուեցրուց, ինչու որ էն փոք-
րիկ օձը ինձ շատ ծառայութիւններ էր արել ինչպէս
դեսպան: Խեղձը դողալով մորիկ էր տալի ինձ, որ ի-
մանայ՝ թէ ես ինչ կանեմ: Ասացի նրան որ շապիկը հա-
նի, նա էլ խսկոյն կատարեց հրամանքս և ետոյ հրամա-
յեցի որ էն շապիկը ճգնաւորի պարտիզի ցանկի վրայ
կախ անեն: Նարադան տեսնելով՝ որ պատիժը էնպէս
շուտ կատարուելէր՝ շատ ուրախացելէր: Բայց թռչունը
էտուրով չքաւականացած ու կամենալով՝ իր վրէժը
հանել օձի աչքերը փորելով՝ տեսաւ իմ խարէու-
թիւնը և յայտնեց նարադային: Նարադան խոյն
ճանապարհ էր ընկել ինձ գտնելու: Ես էս քարի
վրայ պառկած քնած էի և հակառակի պէս էլ իմ
պահապան օձերը մօտս չէին: Յանկարծ մէկ ոտի ձէն

զարթացրեց ինձ: Աչքս որ բաց արի ու նարադայի
բարկացած երեսը տեսայ՝ լեղիս պատռուեց—մնացի
անշարժ, փետացած: Ճգնաւորը սարսափելի ձէնով ա-
սաց ինձ. օ՞ո խարէութենի համար պէտք է պատ-
ժուիս դու էստեղ, էս քարի վրայ պէտք է անշարժ
մնաս և կրակի մէջ տանջուիս, մինչև որ մի մարդ
գայ, որն իրանից փախչում ու ցանկանում լինի իր
կերպարանքը փոխել և եթէ նա կրակի մէջ անցկա-
ցած քեզ մօտ գայ ու կրակի մէջ կանգնած քո պատ-
մութիւնը լսել կարողանայ, դու էն ժամանակ կա-
զատուիս քո չարչարանքներից, էնպէս էլ նա: Բայց
որ դու քու ազատովին կանչել կարողանաս, իմա-
ցիր՝ որ նորա անունը նալայ թագաւոր է: Նարադան
հեռացաւ թէ չէ էս սարսափելի կրակը, որի մէջ
դու ինձ հիմի տեսնում ես, երկրի Ճեղքերից սկսեց-
դուրս գալ և ինձ ամեն կողմից պատեց: Ես կրա-
կումը ես երկու անդամ եօթը տարի է որ անց եմ
կացնում ժամը մէկ անդամ կանչելով, նալայ թագա-
ւոր, գալս ես արդեօք քո ցաւերով իմ ցաւերից
ինձ ազատելու. ինչպէս էլ դու լսեցիր և քեզանից
փախչելով ինձ մօտ եկար: Կմ օձերը ինձ միշտ համ-
բաւ էին բերում քու մասին և իրանք էս կրակի մէջ

էրպում: Օրհնուիս դու, քաջ Նալայի, արի դուրս
տար ինձ էս կրակից:

Ես խօսքերից եսոյ Քարքոտաքայ օձերու թառ
գաւորը Էնպէս փոքրացաւ և փաթթուեցաւ ինչ
պէս մէկ մասանի: Նալան էլ նրան իր մասումը
դրեց և կրակիցը դուրս տարաւ. կրակն էլ նալայի
ուների տակը աներեւովացաւ: Էսպէս եկաւ նալան
Էն աղքեւրի մօտ, որից որ փոքր ինչ առաջ իր պատ.
Կերից վախեցած՝ փախել էր: Էս տեղ օձերու թառ
գաւորը իր Էնքան տարուայ ծարաւը կոտրելու հաշ
մար սկսեց ջուր խմել և կամաց կամաց մեծացաւ և
էլ իր աշազին մեծովթիւնը ընդունեց և ասեց
նալային,

— Պեղ շնորհակարաթիւն անելոց ու վարձաարեւ
լուց առաջ կամենում եմ, որ գու իմ ատամները հաշ
մարես, որ իմանամ Էն սարսափելի կրակի մէջ առ
տամներս ամբողջ են մնացել թէ չէ:

Կալան սկսեց համարել մէկ, երկու, երեք,
չորս, հինգ, վեց, եօթը, ինն: Հիմիկ Քարքոտաքան
դռաաց. «Բաս ո՞վթը: Նալան ութը Էնդուր համար
չսաեց, որ քարքոտաքան ութը համարելու ժաման
նակ նրան կծել էր և հենց էտ ժամանակ էլ նալան
օձի վղի վրայ եղած հայելի նման վահանի մէջ տե-

սաւ իր կերպարանքի տեղ մի ուրիշ սարսափելի ու
տգեղ կերպարանք: Օձերու թագաւորն էլ ասաց նրան.

— Ուզածդ կատարուեցաւ—յօրէս ի դէնը դու
քու կերպարանքի տեղ ուրիշը կունենաս, բայց քեզ
կմնան Էն ընծաները, որոնք գու աստուածներից ստացար քու հարամնիքի օրը. Էնպէս էլ քու ձի քշելու
և կերակուր եփելու արհեստը: Հիմիկ զնայ դու Առուա
տիփերն թագաւորի մօտ ծառայութիւն խնդրիր. առ
սա նրան, որ դու կառավար Վահուկան ես և կարող
ես 100 մղոն մէկ օրուան մէջ զնայ: Թագաւորը քեզ
անպատճառ կընդունի իր մօտ, պատճառ որ նա
կամենայ քեզանից էտ արհեստը սովորել բայց դու
էլ կարող ես նրանից համարելու և զար զլորելու արհ
հեստը սովորել որն որ նա շատ լաւ է իմանում: Էս
տանք սովորելուց եսոյ եթէ դու կամենաս քու սեպ-
հական պատկերը ստանալ մտիկ արա էս վահանի
վրայ՝ միտդ բերելով ինձ և էս օրուան օրը: Էս վա-
հանը որ մօտդ ունենաս, քեզանից օձերը կվախենան.
Էնպէս էլ խորամանկութիւնը, չարութիւնը ու դա-
ւաճանութիւնը: Էսպէս խօսելով տուեց օձերու թա-
գաւորը նալային իր կուրծքի վահանը, որի մէջ նա-
լան իր փոխուած պատկերն էր տեսել և աներեւու
թացաւ նալայի աչքից:

Նալան տամն օրից ետոյ հասաւ Այեօդիայ քառաքը: Ուրտիփերն թագաւորը, որն որ ձի քշելու արհեստը շատ սիրում էր, ուրախութենով վարձում էր լաւ կառավարներ: Էս պատճառով իսկոյն ընդունեց նալային և նրան իր ունեցած ձարտարութենի համար իր ողջ կառավարներու և ձիաներու վրայ գլխաւոր կարգեց: Էստեղ նալան իր վաղուցուան ծառայ Վարշնէային տեսաւ, բայց սա իր պարտնին հիմիկուան ծառայական գրութենի մէջ չձնաւէց:

Էս միջոցում Բիմա թագաւորը ոչ մի բան չէր խնայել իր սիրելի Գամաեանտու բնակութենի տեղը գանելու համար: Էստեր համար նա բոլոր Բրամանները դէս ու դէն էր ուղարկել նրան պատելու, զըտնողն հազար տաւար և մի քաղաքի տեղի չափ տեղ խոստանալով: Էս Բրամաններից մէկը, Զուբէայ անունով, շատ 'ի զուր պտուելից ետոյ, մէկ թագաւորական տօնախմբութենի օր իր պառածին տեսաւ և յարմար ժամանակ էր պտում, որ նրան մօտենայ: Եւ երբ որ նա կանանց առաջելը ասեց Գամաեանտուն, որ ինքը Բրաման է և նրա եղօր բարեկամը, առաջարկելով նրան իր պղպականներու մօտ ետ դառնալ, մի արտասոքի գետ սկսեց վաղել Գամաեանտու աչքերից: Հարցը եց իր որդիկերանց, ազգականներու

և բարեկամներու որպիսութիւնը և իր կարօտութիւնն էլ չէր կարողացել զսպել: Մերունի թագուհին ուրախութենից ու զարմանքից ոտի վրայ չէր կարողանում կանգնել, պատճառ որ Գամաեանտին իր սիրելի քրոջ աղջիկն էր և նա շտապով իր Սունանդայ աղջկայ հետ գնաց Գամաեանտուն իրանց աղջկանութիւնը յայտնելու: Էս երեք կնկտերը մէկ մէկու ձառվ ընկան՝ ուրախութենի արտասունք թափելով: Գամաեանտին խօսք չէր գտնում, որ իր չնորածակալութիւնը յայտնէ, իրան էնպէս լաւ ու սիրով ընդունելու համար: Բայց հիմիկ Գամաեանտու սիրաը ասստիկ գէպի իր հայրենիքն էր քաշում: Թագաւորական ընտանիքը նրան օրհնելուց ու սիրով բարեւելուց ետոյ՝ Ճանապարհ դրեց արագընթաց ձիաներով և ապահով պահապաններով:

Տանը նրան մեծ հանդիսով ընդունեցին, նա էլ իր որդւոցը ու սիրականներին տեսնելից ու աստուածաներուն զոհ մատուցանելուց ետոյ՝ յայտնեց իր մօրը, որ նա հանգստամալ չէ կարող մինչև որ նալային չգտնէ, որն որ գուցէ հիմիկ էլ տարաբաղտութիւնների մէջ է զանվում: Նրա հայրը էլի բրամաններուն հաւաքեց: Գամաեանտին ասեց նրանց, որ գնան նալաւոք:

յին պառեն ու ամենաց՝ տեղ, որ որ նստեն ու
վերկենան էս խօսքերը ասեն.

Խաղացող ուր ես դու գնացել
Յաւդ ու կէս շորս հետդ տարել:
Աւ ինչ տեղ որ մի մարդ սրա վրայ ձեզ մի պատաս-
խան ասյ, նրան լաւ քննեցէք, ով և ուր էլ լինի
և ինչ որ նրանից լսէք՝ ինձ շուտով իմաց արէք:
Բրամանները էս խօսքերից ետպ ճանապարհ
ընկան և ցրուեցան աշխարհի ամեն կողմ: Ամեն
տեղ քաղաքներում, գեղերում, խրճիթներում և ա-
նապաններում, ամեն մարդու առաջեւ իրանց հրա-
մայած խօսքերն ասելով: Բայց իզուր—ոչ ոք ուշա-
զբութիւն չէր դարձնում էս խօսքերի վրայ: Վերջա-
պէս Երամաններից մեկը, Փարնագայ անունով՝ Այեօ-
դիայի Առւտեփերն թագաւորի մօտ գնաց: Սրա առ-
ջեն էլ ասեց սա էն խօսքերը, բայց ոչ նրա վրայ և
ոչ էլ նրա պալատականների վրայ ազգեցութիւն չու-
նեցան էտ խօսքերը: Փարնագան պալատից գուրս
գալու ժամանակ նախագաւիթներում մի կարծ՝ կռնե-
րաւոր տգեղ մարդու պատահեցաւ, որին որ էս խօս-
քերը ասաց.

Խաղացող ուր ես դու գնացել,
Յաւդ ու կէս շորս հետդ տարել:

Լոելից ետպ, արտասոնքից խեղդուած ձայնով ասեց.
— Դորա պէս բարի ու ազնիւ կինը նրա վրայ
բարկանալ չէ կարող որն որ ինքը տարաբաղտութե-
նից ու քաղցից տանջուած, վերջն ծածկոյթը կորց-
րած, անմիտ ու կուրացած ժամանակը դրան մէնակ
անոտառումը թողեց. դրա սուրբ սիրով, դրա բարե-
պաշտ հոգին իր ամեն ցաւը կմոռանայ, որն որ գա
նրանից կրեց, եթէ նրա ցաւը ու տանջանքը տեսնի:

Բրամաննը էս լսեց թէ չէ, խոյն ճանապարհ
ընկառ Գամահեանսուն յայտնելու: Սա բրամանի խօս-
քերից իմացաւ, որ էտ մարդը պէսք է անսպատճառ
նալան լինի: Էտ պատճառով ինդիրեց իր մօրը մի
խորամանկութենի մէջ օդնական լինելու, որն որ նա
կամենում էր գործ գնել էն մարդուն, որ անպատ-
ճառ նալան պէտք է լինի՝ իր մօտ բերելու համար
Մայրը համաձայնեց և Գամահեանսին էլ ուղարկեց
Սուգելայ բրամանին կանչելու, որ իրան գտել էր և
որն որ շատ բարեպաշտ ու ազնիւ մարդ էր և իր
եղբայրներու բարեկամ: Նրան Գամահեանսին առաւել
էնդուր համար էր ուղում, որ իր ու նալայի գտնողը
միենոյն մարդը լինի, բայց Փարնագային էլ ինչպէս
հարկն էր վարձատրեց: Սուգելային ասեց Գամահեան-
սին:

— Գնա Ռիտուփերն թագաւորի մօտ և ասա Ա.
յեօդիայի թագաւորին, իբրև թէ պատահմամբ,
Դամականտին՝ Բիմայի աղջեկը, երկրորդ անդամ պի-
տի իրան փեսայ ընտրի, պատճառ որ նա կարծումէ
թէ իր առաջնն մարդուն էլ գտնել չի կարող, ասա
որ անթիւ թագաւորներ ու թագաւորի որդիք գա-
լիս են էստեղ և երբ որ Ռիտուփերն քեզ հարցնէ,
թէ երբ պիտի լինի էտ, գու զարմացիր որ նա չէ ի-
մանում, ու ասա թէ ընտրութիւնը վաղը պէտք է լինի,
թագաւոր, եթէ գու էլ կամենում ես էստեղ լինել
էտ քեզ դժուար չի լինի, ինչու որ գու էսպիսի կա-
ռավար ունիս, որ 100 մղն օրուան մէջ անց է կե-
նում: Թէ ու զում ես, ուրեմն շտապիր, որովհետեւ
ընարութիւնը առաւօտը վաղ պիտի լինի: Դամա-
կանտու ցանկութիւնը էսպէս է, ինքն է ինձ ասել:
Սուլեկան շտապով գնաց Դամականտու հրամանը կա-
տարելու և էսպէս արեց, ինչպէս էլ իրան ասած էր:
Ռիտուփերն թագաւորը նրա պատմածը որ լսեց, իր
գահից վեր թռաւ, հրամայեց Վազուկային կամչել
և ասեց նրան սիրով ու գուրգուրանքով և նս ուզում
եմ Վիդարաբայ գնալ ուր որ վաղը առաւօտը Պա-
մականտին երկրորդ անդամ պիտի իրան փեսայ ընտ-
րի, հիմիկ կարող ես գու քու չնորհքը ցոյց տալ, իմ

սիրելի Կառավար ու մի օրումը 100 մղն անցկենալ:»
Էս ամեն մի խօսքը նալայի սիրով թրի պէս էր
Խրվում ու նրան կարասում: Ժլր իմանում հաւատայ
իր ականջն՝ թէ չէ, ինչու որ իմանում էր իր սիրե-
լի Դամականտու հաւատարմութիւնը: Ինչպէս և իցէ
ասեց իր մոքումը: «Կերթամ Ճշմարտութիւնը իմա-
նալու»: Ետոյ թագաւորին ասեց. «Աչքիս վրայ, իմ
թագաւոր, էս օր և էտ քեզ քու ուզեցած տեղը
կհասցնեմ» Շուտով գնաց չորս էնալիսի ձի ընտրեց, ո-
րանց էս օրինակ Ճանապարհորդութեան մէջ էր գործ
ածում—լղար, դիմացով զօրեղը աղնիւ ցեղից և ա-
րագ ինչպէս թռչուն. Նա էս յատկութիւնները գաղտ-
նի նշաններով էր իմանում: Լծեց նրանցը կառքի
առաջ, շուտով Ռիտուփերն ու Վարչնէայ կառա-
վարը, նալայի ինսդիրքով նստան: Նալան առաջելը
նատեց, սանձերը ձեռն առաւ ու ձէն տուեց ձիանե-
րուն. «Առ աշխատեցէք, էս օր Վիդարաբայ պիտի
համենք»: Զիաները զողալով վեր ընկան գետնի վրայ,
բայց նալան նրանցը շուտ վերկացրեց ու քաղցր խօս-
քերով սկսեց նրանց քշել: Նրանք էլ կարծես գետնի
վրայ ոտ չէին գնում—նետի պէս թռչում էին: Ռի-
տուփերն բերանը բաց մնացած՝ մունջ մոփի էր տա-
լի Վազուկային ու ձիաներուն, բայց Վարչնէան ա-

ոռւմ էր իր մաքումը. «Կարծես էստեղ՝ մի բան կայ,
էսպէս ձի քշել միայն նալան է իմանում; բայց էս
մարդը նալայի նման չէ» էսպիսի սաստիկ առաջ վա-
ղեռւց՝ բարձրացած քամին Ոխտուփերնի վերարկուն
թոցրեց, նա էլ ձէն տուեց նալային, որ ձիաները
կանգնացնի, որ վերարկուն վեր առնի: «Ո՛ւշ է, թա-
գաւոր,» ասեց նալան, «վերարկուն մեզանից մի եօթ
մղոն հեռու է արդէն: Ոխտուփերն զլուխը շարժ
տալով ասեց. «Ամեն արհեստ մէկ մարդու չէ տուած.
Ես էլ մի լաւ արհեստ զիտեմ: Հօրէն էն ծառը չնա
տենում: Գիտես քանի տերեւ է նրանից վեր ընկել—
ահա ասեմ քեզ. 202. ու պառողներից հարիւր ու
մէկ, բայց ողջ ոստերու ու Ճիւղերու վրան կան 5
միլիոն տերեւ, իսկ պառող երկու հազար հարիւրից
հինգ պակաս: Նալան կառքը կանգնացրեց և ասեց.
«Անհասկանալի է ինձ քու ասածը, ես պէտք է ինքս
համարեմ, որ հաւատամ, թող Վարշնէան մինչեւ իմ
համարելը՝ սանձը բոնի: Նալան սկսեց համարել
պտուղները՝ տեսաւ որ ուղեղ է: «Բաւական է» ասեց
թագաւորը, «էտ հօ տեսար», բայց նալան կառքից
վեր եկաւ ու շարունակեց համարելը ու թագաւորին
ասեց, որ առանց նրան զնայ Վիդարաբայ, որ նա
տերեւներն էլ համարի, բայց Ոխտուփերնի սիրտը

պատուվում էր, տեսնելով որ էտակիսիով ժամանակին
չի պիտի հասնի տեղը. խոստացաւ նրան ամենայն
բան, ինչ որ նա կամենում էր, միայն թէ շուտով
նստի ու նրան արեւը մէր մանելից առաջ Վիդարա-
բայ հացնի: Նալան համաձայնեցաւ էն պայմանով,
որ Ոխտուփերն նրան զար գլորելու արհեստը սովորցնէ
և ինքն էլ խոսացաւ նրան ձի քշելով սովորցնել: Թա-
գաւորը կամայ համաձայնեցաւ ու սովորցրեց
նալային էտ արտեսաները: Նալան որ էտ ար-
հեստը սովորեցաւ, Քալի չար ողին նրա միջից
գործ եկաւ ու մտաւ էն ծառը, որի տերեւները նա-
լան շուտով համարեց ու տեսաւ, որ Ոխտուփերնի
ասածը ուղեղ էր, բայց ծառը չորացաւ, ինչու որ չար
ողին նրա մէջ էր մտել: Նալան հեշտացած ու հան-
գստացած կառքը նստեց, որն որ իր սլաքի նման ըն-
թացքը շարունակեց ու գեռ արեգակով Վիդարա-
բայ հասաւ: Սրանք որ մօտենում էին, Դամաեան-
տին լսեց կառքի գրգռալը ու ձիաներու ոսի ձայնը,
նրա սիրան էլ վկայում էր իր մարդու մօտենալը, մա-
նաւանսդ նա գիտէր, որ նալայից զատ ուրիշը էտակէս
քշել չէր կարող: Նուտով վագեց պալատի կտաւը,
բայց նորա տեղը միայն թագաւորին, Վարշնէաին,
որին որ ճանաչում էր, ու մի տղեղ մարդ տեսաւ:

Նալան չէր էն կառավարը։ Դամաեանտու ու Նալայի
ձիաներն էլ որ լսեցին կառքի ծանօթ ձայնը՝ ուրա-
խութենից սկսան խրխնջալ։ Ախտուվերն, որ դէս ու
դէն մոիկ արեց ու ոչինչ պատրաստութիւն չտեսաւ,
իմացաւ որ խաբուած է, բայց էլի շուտ խելքը գրւ-
խին հաւաքեց։ Բիմա թագաւորը նրան ողջունեց ու
հարցրեց՝ թէ ինչո՞ւ համար է աշխատել և էպան
հեռու տեղ եկել։ Ասեց նրան. «Քու առողջութիւնը
իմանալու համար» Սա, զորդ է, կասկածումէր, բայց
էլի հեռուից եկած հիւրին սիրով ընդունեց ու ասեց,
որ իր ապարանումը ինչ կերպի իրան յարմար կը
թուի, էնպէս հանգստանայ։ Դամաեանտին իր հաւա-
տարիմ աղախնուն ասեց, որ գնայ կառավարի հետ
խօսի ու նրան էն բրամանի ասած խօսքերը ասի։
Սրան էլ Վազուկա-Նալան մի և նոյն պատասխանը
տուեց։ Աղախինն էլ յայսնեց էտ Դամաեանտուն։ Սո-
մի խորը ախ քաշեց ու ասեց. «Ետ իմ մարդն է,
բայց կերպարանքը իրանը չէ. գնա էլի ու լսու նրա
ամէն մէկ շարժմունքը տնտղէ. աշխատիր որ նրան,
երբ որ իր թագաւորի համար կերակուր լինի եփում,
ու ջուր տան և ոչ կրակ։» Բայց շուտով աղախինը
եկաւ ու զարմացած պատմեց իր տիկինին՝ որ նա էն
մարդու մէջ զարմանալի նշաններ էր տեսել—առանց

կոանալու ամէն դռնի մէջ անց է կենում, ասում էր,
ինչպէս էլ փոքր դուռ լինի, դուռը բարձրանում է
նրա առաջեւը. մէկ աչքը որ մի դատարկ ամանի
մէջ է զցում, ջուրը սկսում է եփ գալ. արեգակի
մէջ յարդ է վառում ու մէկ թռումած ծաղիկ, որն
որ գետնից վեր առաւ, սկսեց նրա ձեռքում նորից
ծաղկել։ Հաւատա ինձ, տիկին, էստոնք ես իմ աչ-
քովս եմ տեսել։

Դամաեանտին ուրախացած էս համբաւից ասեց.
— Ես է նա, էլ չեմ կասկածում. էտոնք աստուած-
ներու տուլքերն են, որոնք նա իմ հարսանիքի օրը
ստացաւ. գնա և նրան իմ մօտ բեր։

Կառավարը, որ նրա առաջ եկաւ, ասեց նա.
«Աահուկա, տեսել ես դու արդեօք քու օրումը մի
մարդ, որն որ իր քնած կնկան անտառումը մէնակ
թողէց, երբ որ կինը ուզումէր նրա հետ ամեն ցաւ
ու կսկիծ բաժանել։ Նալան պատասխանեց.

— Իմացիր, Դամաեանտի, քու մարդը, որ իր թա-
գաւորութիւնը աանուլ տուեց ու իր ուխտը մոռա-
ցած քեզ մէնակ թողէց ու քեզնից փախաւ, էտ
նալայ թագաւորի շնորհքը չէր, այլ Քալինը, որ
նրա սրտումը բուն էր դրել։ Բայց ասա դու ինձ,
ի՞նչպէս կարող է մի աղնիւ ու անմեղ կին, որն որ

աստուածների միջեց իրան մի մարդ լնարեց, որն որ
իր մարդուն ամենամեծ ասրաբաղսութիւններու մէջ
հաւատարիմ մնաց, ի՞նչպէս կարող է էլե երկրորդ
անդամ պսակուել ու աշխարհ մօնել:

Դամաեանտին ասեց նրան գողարվլ որ ինքը
անմեղ է և պատմեց նրան իր խորամանկութիւնը, որ
ինքը գործ էր զրել նրան իր մօա բերելու ու գտնե-
լու համար և վկայ կանչեց օդը և երկնի աստղերը:
Յանկարծ օդը շնչալով նալայի ականջովը անցկացաւ
ու ասաց նրան, «Դամաեանտին միշտ քեզ հաւատա-
րիմ է եղել նրա սիրոր սուրբ է և անարատ, ինչ-
պէս արեգակի լոյսը, մենք արլեքներս միշտ նրա
մօա էինք, ինչ որ դու նրանից հեռացել ես, ուրեմն
մօտեցիս նրան, ինչպէս հարկն է: Էս ժամանակ մի
ձայն բարձրացաւ, որ նման էր աստուածային փողե-
րու ձայնին, սենեակը լցուեցաւ անուշահոտութենով
և էս շատ ժամանակ մէկ մէկից հեռու եղած, ծանր
փորձուած ու նորից միաւորած մարդու կնկայ վրայ
մի ծաղկիէ անձրե եկաւ: Նալան և Դամաեանտին
զարմացած մտիկ էին տալի էս հրաշքին: Էս ժամա-
նակին նալայի միտն եկաւ օձերու թագաւորի ասածն
և մտիկ տուեց նրանից ատացած հայելու նման վա-
հանին և փոխարկուեց յանկարծ և իր իսկական

պատկերը ստացած կանգնած էր Դամաեանտու առա-
ջեր, որն որ էս տեսնելով՝ ծիկայ տուեց ուրախու-
թենից և լնկաւ նորա գիրկը: Ուրախութենի արտա-
սունքը վագեցին նալայի աչքերից, երբ որ Դամա-
եանտին նրա երեխանցը բերաւ նորա մօա գրկեց նա
նրանցը և անհամար համբոյներով ծածկեց նոցա
երեսն ու գլուխոր: Իման թագաւորը և նորա կինը
ուրախութենով ընդունեցին իրանց վեսին: Էնպէս
էլ Դամաեանտու եղբայրները և մի հարսանկքից էլ
աւելի հանդէս սալքեցին: Ողջ քաղաքը զարդարե-
ցին պսակներով լրոշակներով և ամենքը ուրախա-
նում էին, նաև Ռիտուֆերն թագաւորը, որին որ
նալայ թագաւորը, ինչպէս խոսացել էր, ձի քշելս
ու կառք կառավարելու արհեստը սովորցրեց. շնոր-
հաւորում էր նրանց բազաւորութիւնը և նրանց
զաշնակիցը գառաւ և նալայից սովորած արհեստավ
մի օրումը իր հեռու երկիրը վերադարձաւ: Բայց
էսպէս մէկ ամիս ուրախութենով անցկացնելից եայց,
վերկացաւ նալան, վեր առաւ իր հետ վեց փիղ, վեց
հարիւր զինուոր, յիսուն ձիաւոր և մի գեղեցիկ կառ-
քում նստեց ու գնաց Փուշքարայի մօա իր տէրու-
թիւնը ետ տանելու համար:


— Ես էլի հարստութիւն եմ ձարել ասեց նա իր

եղքօրը, կամենում ես խաղալ ինձ հետ, ինչպէս մէկ
անգամ խաղում էինք: Ես զնում եմ իմ զլուխը, Դա-
մաեանտունը և ամեն բան, ինչոր ունիմ: Դու էլ
վեր արի քու գլուխը և քո ողջ տէրութիւնը՝ ողջ
մէկ զար գլորելու վրայ: Կամ եթէ սրիդ աւելի ես
հաւատում քան թէ զարերուն, թող մենամարտու-
թիւնը և կոփուր վճռէ բանը: Ծէսը և պարտաւրու-
թիւնը հրամայումէ, որ տանողը տանուլ տուողի ա-
ռաջարկած խաղը չը ետ դարձնէ: Եւ ինձ կվայելէ
աշխատել իմ կորցրած ժառանգութիւնը կրկին ձեռք
բերել:

Փուշքարան իր բաղդով կուրացած՝ իսկոյն հա-
մաձայնուեցաւ և ծիծաղելով ու պարծենալով պատ-
րաստուեցաւ խաղալու: «Խաղնք» նալայ, ոչ ովիշ հետ
ես էնպէս սիրով չեմ խաղում, ինչպէս քեզ հետ,
նալայ, և ոչ մի տարած բան ինձ էնպէս քաղցր
չէ, ինչպէս քեզնից տարածը:» «Խաղնք», կրկնեց
նալան՝ իր բարկութիւնը թագինելով, աւելի լաւ է
խաղալ քան թէ դարդակ խօսել:» Եւ առաջի զար
գլորելումը յաղթուեցաւ Փուշքարան: Նալան կրկին իր
հօրական ժառանգութիւնը յետ ստացաւ և էլի նի-
շագայի իշխան դառաւ, ինչպէս առաջ: Նղեօրն ա-
սաց նա.

— Պու հիմիկ իմ ձեռը ընկար, բայց ուրիշի մեղքի
համար ես չեմ կամենում քեզ պատժել պատճառ-
որ Գալին էր և ոչ դու, որն որ ինձ իմ թագաւորու-
թենից զըկեց: Ետուր համար գնա էլի քու սեպհա-
կան երկիրը. ամեն բան ինչ որ վաղ քոնն էր՝ թող-
նում եմ քեզ ապրիր էնտեղ հարիւր տարի ուրախ ու
բաւական. ես միշտ քեզ սիրով եղքայր կլինիմ; ինչ-
պէս առաջ էի: Փուշքարան շարժուած իր եղքօր մե-
ծահոգութենից՝ բննեց՝ նրա ձեռը ու ասեց.

— Ապրիս անթիւ տարի ուրախ ու բաղդաւոր, և
երդում կերաւ. յաւիտեան նրա բարեկամը լինել. նրան
և Գամաեանտուն ցանկանում էր նա օրհնութիւն և
բաղտաւրութիւն և իրան էլ բաղտաւոր էր համա-
րում, որ իր առաջուայ վիճակն է ետ դառնում, պատ-
ճառ որ իր հարուստ ու անօրէնք ստացած վիճա-
կում երբէք նա հանգստութիւն ու բաղտաւրու-
թիւն չէր տեսել: Էսպէս քաղցր բաժանուեցան նը-
րանք մէկ մէկուց: Անսահման էր ժողովրդի ուրա-
խութիւնը երբ որ օրինաւոր թագաւորը իր կնկանով
մնաւ իր երկիրը: Բաղտաւոր ու իր հպատակներու
երջանկութեան համար իշխում էր նալան՝ մինչև խոր
ծերութիւնը և երբէք չէր մոռանում աստուածնե-
րուն պատարագով և աղօթքով պաշտելու:



«Ազգային գրադարան



NL0383665

1426